ԵՐԵՎԱՆ Ք.ԱՎԱՆ Թ.ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐ Փ.
N55ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ՝
ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄ

# ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Սույն նախագծով նախատեսված է քանդել և ապամոնտաժել Երևան քաղաքի Ավան Թ. Ծ. Աղբյուր փ. N55ա հասցեում գտնվող մասնաշենքերը:

## Շինությունների բնութագիրը

Քանդման ենթակա շինությունները բաղկացած են 3 մասնաշենքերից և մասնաշենքերը միմյանց միացնող անցումային շինությունից:
Մասնաշենքերը կարկասա-պանելային են 6մ սյուների քայլով և հավաքովի ե/բ կլորանցքավոր ծածկի սալերով:
Մասնաշենքերի ընդհանուր շինարարական /տարածական/ ծավալը կազմում է 20948մ3,որից ըստ քանդման աշխատանքների կատարման նախագծի հաշվարկված է 4 ամսվա տևողություն այդ թվում 0,5 ամիս նախապատրաստական փուլի աշխատանքներ:
Քանդման աշխատանքների նախագիծը /այսուհետև ՔԱՆ/ մշակված է ըստ ՀՀ ՇՆԵՎԿ 3.01.01 2008-ի դրույթներով, որը ենթադրում է քանդման աշխատանքների իրականացման 2 փուլ՝
Նախապատրաստական փուլ
Հիմնական փուլ
Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները՝

- շին հրապարակի ժամանակավոր ցանկապատում /ըստ անհրաժեշտության/,
- շին հրապարակի ժամանակավոր ջրամատակարարում, էլեկտրամատակարարում,
- ժամանակավոր կենցաղային և գրասենյակային շարժական շինությունների տեղադրում
- շենք մտնող բոլոր կոմունիկացիաների անջատում,
- ժամանակավոր հարթակների պատրաստում ե/բ հավաքովի կոնստրուկցիաների շտաբելավորման համար,
- վերամբարձ կռունկի գործողության գոտիների անվտանգության սահմանների նշահարում,
- շին հրապարակի գիշերային լուսավորություն,
- շին մեքենաների լվացման կետի պատրաստում: